

պատի արեւելեան ճամբաներուն (էջ 211 և 365), և Մէքքէի ուխտագնացութեան ժամանակ՝ Եգիպտոսի մասնետական ուխտաւորներու հաւաքաւ՛այրը, վասըն՝ զի, ինչպէս կը կարծուի, հոնկէ է որ անոնք կ'իջնէին Կարմիր ծովուն եզերքը՝ Քուէյր։ Ասիկա տիեզերական վաղեմի ճամբայ մըն էր, թերեոս հռոմէական տիրապետութեան շրջանէն մնացած։

Ադոնց իր Աւխարհագրութեան մէջ (Ափրիկէ. էջ 84) չափազանց հետաքրքրական տեղեկութիւն մը կու տայ, ինչ որ կը հաստատէ այս տեսութիւնը։ Կ'ըսէ թէ Խուփս = Ղրնա քաղաքէն մինչև Կարմիր ծով, անապատին մէջ, այս ճամբուն վրայ, որ Բերինիկէ (= Քուէյր) նաւահանգիստը կը տանի, կային սա քաղաքները. Փենիկէ, Դիսիմէ, Ափրոդիսուպոլիս, Կամպասի, Դիալ Իդրեումա, Արիսոնիս, Փաղինա, Ապոդոնի Իդրեումա, Կաբալսի, Կենոն Իդրեումա և վերջապէս Բերենիկէ։

Ուրեմն արեւելեան անապատին մէջ Քընայէն Քուէյր երբեմն 10 քաղաքներ կային — իրենց անուններէն դատելով՝ հելլէն-հռոմէական ժագամբ — որոնք այդ առեւտրական մեծ ուղիին վրայ կը գտնուէին գրեթէ քով քովի, վասնզի ըստ Յովհաննէս Թիւթիւնճիի, այդ ճամբուն տեւողութիւնը միայն 8 օր էր, իսկ ըստ Ստրաբոնի՝ 259 հռոմէական մղոն։ Այսքան փոքր և անապատային տարածութեան մը վրայ 10 քաղաքներու գոյութիւնը անշուշտ անսովոր բան մըն է։ Այդ քաղաքները՝ ամէնքն ալ անհետացած են արաբ տիրապետութեան օրով, սակայն ճամբան միշտ գործածուած է և Յովհաննէս Թիւթիւնճի եպիսկոպոս ալ այդ աւանդական ճամբով Ղրնայէն դիմած է դէպի Կարմիր ծովու եզերքը Քուէյր, իր կո-